Կենտրոնական բանկի նախագահը մասնակցել է ԱՄՀ և Կահիրեում ամերիկյան համալսարանի համատեղ հետազոտական համաժողովին

22.05.2025

Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը մայիսի 18-19-ը Կահիրեում մասնակցել է Արժույթի միջազգային հիմնադրամի և Կահիրեում ամերիկյան համալսարանի համատեղ կազմակերպած «Մակրոտնտեսական և կառուցվածքային քաղաքականության իրականացումը գլոբալ տնտեսական փոփոխվող միջավայրում» թեմայով առաջին տնտեսական հետազոտական համաժողովին:

Համաժողովին մասնակցել են միջազգային և տարածաշրջանային մակարդակով հայտնի ակադեմիական, հետազոտական շրջանակների ներկայացուցիչներ, ինչպես նաև քաղաքականություն մշակողներ, որոնք քննարկել են տարածաշրջանային նշանակության գլոբալ տնտեսական և քաղաքականության իրականացմանն առնչվող թեմաներ: Համաժողովի նպատակներից մեկը նաև տարածաշրջանային երկրների ֆինանսների նախարարությունների և կենտրոնական բանկերի տնտեսական հետազոտությունների ներուժի զարգացումն էր:

Մարտին Գալստյանը համաժողովին հանդես է եկել որպես ամփոփիչ պանելային քննարկման մասնակից՝ Նայջել Քլարկի (ԱՄՀ գործադիր տնօրենի տեղակալ) մոդերատորությամբ Ֆրանսուա Բորգինյոնի (Փարիզի տնտեսագիտական դպրոց), Բարրի Այքենգրինի (Կալիֆորնիայի Բերքլիի համալսարան) և Յուսեֆ Բուտրոս Գալիի (Եգիպտոսի տնտեսական զարգացման նախագահական հատուկ խորհուրդ) հետ համատեղ՝ անդրադառնալով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններին, ֆինանսական կայունությանը, արդյունաբերական քաղաքականությանը, կանաչ էներգակիրներին, արհեստական բանականությանը և աշխատաշուկայի ապագային առնչվող թեմաներին:

Պանելային քննարկման ժամանակ Մարտին Գալստյանը անդրադարձել է նաև 2024 թվականի սկզբից Կենտրոնական բանկում դրամավարկային քաղաքականության իրականացման նպատակով գործարկված նոր՝ Երկրորդ սերնդի կանխատեսումների և քաղաքականության վերլուծության համակարգին (FPAS Mark II), որն արժանացել է մասնակցիների բարձր գնահատականին: